



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

22.05.2012. N

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ Վ Ե Ր Ջ Ի Ն Զ Ա Ն Գ Ի Կ Ա Պ Ա Կ Ց ՈՒ Թ Յ Ա Մ Բ

Միրելի՛ շրջանավարտներ

Շնորհավորում եմ դպրոցական ուսումնառության ավարտն ազդարարող տոնական օրվա կապակցությամբ և ցանկանում, որ այս նշանակալի օրը միմիայն ուրախ տրամադրություն ու անսահման բերկրանք պարզևի բոլորիդ:

Կրթօջախում սովորելու տարիները համարվում են մարդկային կենսագրության ամենանվիրական և ամենակարևոր էջերն ու հազեցած լինում բազում հիշարժան դրվագներով:

Դուք այսօր կատարում եք Ձեր կյանքի ամենապատասխանատու անցումը, հրաժեշտ եք տալիս դպրոցական խանդավառ առօրյային ու պատրաստվում ընթանալ կյանքի բազում իմաստություններով լեցուն մի յուրօրինակ ճանապարհով:

Թո՛ղ որ, այդ ճանապարհի մեկնարկի ու շարունակության անբաժան ուղեկիցները լինեն բարությունը, խաղաղությունն ու հաջողությունները:

Վստահ եմ, որ դպրոցում ստացած գիտելիքները հաստատապես կնպաստեն ժամանակի ոգուն համապատասխանող ընկալումների ձևավորմանը և Դուք կլինեք ժողովրդավարության չափանիշներն ու սկզբունքները լիարժեքորեն կրող քաղաքացիներ:

Վերջին զանգի առիթով մենք պետք է բացառիկ երախտագիտության ու գնահատանքի խոսքեր հղենք մեր թանկագին մանկավարժներին՝ շնորհակալությամբ ընդգծելով նրանց վեհ առաքելության բոլոր կարևորությունները:

Այս խորախորհուրդ օրվա կապակցությամբ դարձյալ շնորհավորում եմ բոլոր շրջանավարտներին, նրանց ուսուցիչներին և ծնողներին:

Հարգանքներով

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ